

20.04.2016թ.

ժ. 11.00

*Մասնակցում էին՝ Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Ս.Դավթյան, Ա.Սաֆյան, Լ.Պետրոսյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)  
Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Վ.Սարոյան (իրավաբանական բաժնի պետ), Ն.Մուշեղյան (վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ), Լ. Խաչատրյան (մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ), Հ. Տիրիգյան (ֆինանսների վիճակագրության բաժնի պետ):*

### **Օրակարգի նախագծում հինգ հարց.**

1. «Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/*

2. «Կազմակերպության կողմից արտադրանքի արտադրության և իրացման ծախսերի մասին» Ձև թիվ 1-ԱԾ միանվագ հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Խաչատրյան/*

3. «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» (Ձև 1-ՏԳ (եռամսյակային) և (տարեկան)) պետական վիճակագրական հաշվետվության ձևերում և դրանց լրացման հրահանգներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Հ.Տիրիգյան/*

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում Մեքսիկայի Միացյալ Նահանգների Մեխիկո քաղաքում 2016 թվականի մարտի 30-ից ապրիլի 1-ը ՄԱԿ-ի վիճակագրական բաժնի կողմից կազմակերպված «Կայուն զարգացման նպատակների ցուցանիշների միջգերատեսչական և փորձագիտական խմբի» (IAEG-SDGs) երրորդ հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Յու.Պողոսյան, Ա.Սաֆյան/*

5. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Բվեարկության արդյունքները-կողմ՝5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

### **Լսեցին՝**

1. «Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ն.Մուշեղյան/*

### **Որոշեցին՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության 2013-2015 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

*/Անհատական/*

*/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

### **Լսեցին՝**

2. «Կազմակերպության կողմից արտադրանքի արտադրության և իրացման ծախսերի մասին» Ձև թիվ 1-ԱԾ միանվագ հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Խաչատրյան/*

### **Որոշեցին՝**

հաստատել «Կազմակերպության կողմից արտադրանքի արտադրության և իրացման ծախսերի մասին» Ձև թիվ 1-ԱԾ հետազոտության հարցաթերթը և հրահանգը՝ համաձայն հավելվածի:

*/Նորմատիվ/*

*/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

3. «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» (Ձև 1-ՏԳ (եռամսյակային) և (տարեկան)) պետական վիճակագրական հաշվետվության ձևերում և դրանց լրացման հրահանգներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Հ.Տիրիզյան/*

**Որոշեցին՝**

հաստատել «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» (Ձև 1-ՏԳ (եռամսյակային) և (տարեկան)) պետական վիճակագրական հաշվետվության ձևերում և դրանց լրացման հրահանգներում առաջարկվող փոփոխությունները:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

4.1. Հաղորդում՝ Մեքսիկայի Միացյալ Նահանգների Մեխիկո քաղաքում 2016 թվականի մարտի 30-ից ապրիլի 1-ը ՄԱԿ-ի վիճակագրական բաժնի կողմից կազմակերպված «Կայուն զարգացման նպատակների ցուցանիշների միջգերատեսչական և փորձագիտական խմբի» (IAEG-SDGs) երրորդ հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Յու.Պողոսյան, Ա.Սաֆյան/*

**Որոշեցին՝**

արտասահմանյան գործուղման մասին հաղորդումն ընդունել ի գիտություն

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ